«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Փյունիկ ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcpyunik.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31.03.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նազելի Արսենյան
	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	13Գ-018
Խախտում՝	1. «Փյունիկ-12-1» թիմի ֆուտբոլիստ Գագիկ Խաչատրյանի (40521) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Զ, 15-րդ կետ) 2. «Փյունիկ-12-1» թիմի ֆուտբոլիստ Վազգեն Գրբոյանի (40522) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Զ, 15-րդ կետ)
Առաջնություն՝	ՀՀ ֆուտբոլի 2024-2025թթ. մինչև 13 տարեկանների գավաթի խաղարկություն
Խաղ՝	«Փյունիկ-12-1» - «Շիրակ-12-1», 22.03.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Փյունիկ-12-1» թիմի ֆուտբոլիստ Գագիկ Խաչատրյանին (40521) որակազրկել 5 (հինգ) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 22-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով: Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Փյունիկ-12-1» թիմի ֆուտբոլիստ Գագիկ Խաչատրյանին (40521) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի մայիսի 22-ը ներառյալ:
2. «Փյունիկ-12-1» թիմի ֆուտբոլիստ Վազգեն Գրբոյանին (40522) որակազրկել 4 (չորս) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 22-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել։ «Փյունիկ-12-1» թիմի ֆուտբոլիստ Վազգեն Գրբոյանի (40522) նկատմամբ փորձաշրջան սահմանել 2 (երկու) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի մայիսի 22-ը ներառյալ։

3. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 13-րդ հոդվածի 21-րդ կետը՝ որակազրկումը տարածվում է ՀՖՖ կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր մրցումների վրա։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։